



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ**

N 65-Ա/2

29.01.2020թ

**ԳՈՐԻՍՈՒՄ ԵՎ ՎԱՆԱՁՈՐՈՒՄ ԲԱՆԱԿԻ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 20-րդ ենթակետով՝ Գորիսում և Վանաձորում բանակի օրվա առթիվ միջոցառումների իրականացմանն աջակցելու նպատակով՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Հաստատել Գորիսում և Վանաձորում բանակի օրվա առթիվ միջոցառումների իրականացման ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
2. «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի N 2 աղյուսակի «1168. Արվեստների ծրագրի» «11005. Մշակութային միջոցառումների իրականացում» միջոցառման համար Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը նախատեսված գումարներից (տող՝ «Աջակցություն այլ մշակութային միջոցառումների և ծրագրերի իրականացմանը») հատկացնել 600.0 հազար (վեց հարյուր հազար) դրամ՝ 2020 թվականի հունվարի 28-ին Գորիսում և Վանաձորում բանակի օրվա առթիվ միջոցառումների իրականացման նպատակով դահլիճների վարձակալության ծախսերի ապահովմանը:

3. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) գլխավոր քարտուղարին սույն հրամանի 2-րդ կետում նշված գումարը հատկացնելու համար հրամանի ուժի մեջ մտնելու պահից 15-օրյա ժամկետում կնքել պայմանագրեր (այսուհետ՝ պայմանագրեր) «Գորիսի Վ. Վաղարշյանի անվան պետական դրամատիկական թատրոն» և «Վանաձորի Հ. Աբելյանի անվան պետական դրամատիկական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների հետ:

4. Նախարարության ժամանակակից արվեստի վարչության պետին

1) հսկողություն իրականացնել պայմանագրերի, պայմանագրերով սահմանված աշխատանքների կատարման և բովանդակային հաշվետվությունների ներկայացման ժամկետների կատարման նկատմամբ.

2) պայմանագրերով նախատեսված բովանդակային հաշվետվություններն ստանալուց հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում դրանց վերաբերյալ եզրակացությունները տրամադրել նախարարության ֆինանսաբյուջետային վարչությանը.

3) մինչև պայմանագրերի գործողության ժամկետների ավարտը նախարարության գլխավոր քարտուղարի հաստատմանը ներկայացնել պայմանագրերով նախատեսված աշխատանքների կատարման վերաբերյալ հանձնման-ընդունման արձանագրությունների նախագծերը և բովանդակային հաշվետվությունները:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Ա. Խզմալյանին:

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

X

Հավելված

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի

ԾՐԱԳԻՐ
ԳՈՐԻՍՈՒՄ ԵՎ ՎԱՆԱՁՈՐՈՒՄ ԲԱՆԱԿԻ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

1	Կազմակերպության անվանում	«Գորիսի Վ.Վաղարշյանի անվան դրամատիկական թատրոն» ՊՈԱԿ և «Վանաձորի Հ. Աբեյանի անվան պետական դրամատիկական թատրոն» ՊՈԱԿ
2	Կազմակերպության գտնվելու վայր	ք. Գորիս, Կոմիտաս 28 ք. Վանաձոր, Թատերական 3
3	Ծրագրի անվանում	Բանակի օրվան նվիրված տոնական հանդիսություն
3.1	Բովանդակություն	Միջոցառմանը ելույթ են ունեցել հանրապետության և ՊՆ բարձրագույն ղեկավարության ներկայացուցիչներ, ՀՀ ՁՈւ երգի և պարի համույթի գործիքային խումբը, երգչախումբը և պարային խումբը, ինչպես նաև՝ ճանաչված մենակատարներ և համույթներ:
3.2	Նպատակ	Բանակի օրը հանդիսավորությամբ նշել
3.3	Անցկացման ժամկետ	2020թ. հունվարի 26-28
3.4	Անցկացման վայր	Գորիսի Վ.Վաղարշյանի անվան և Վանաձորի Հ.Աբեյանի անվան պետական դրամատիկական թատրոններ
3.5	Ակնկալվող արդյունքներ	Բանակի օրը դարձնել համաժողովրդական տոն
4.	Ոչ ֆինանսական ցուցանիշներ	Առաջարկվող ծրագրի շրջանակում կազմակերպվել է տոնական համերգ շուրջ 700 մասնակցի համար